ԱՌԱԿՆԵՐ

ՄԱԹՈՍ ԱՂԱՅԻՆ ԱՌԱԿԸ

Ութանասունվեց տարեկան Մաթոս աղան ծանր հիվանդ էր։ Նրա լեղապարկը լցված էր քարերով և նա տասն ամիս է, որ ընկած էր անկողին։ Ցավի ամեն մի բռնկումը պատճառում էր նրան դժոխային տանջանք։ Բժիշկները դալիս ու դնում էին, հիվանդին օգնել չէին կարող։

Զդիմանալով իր ցավին, հուսահատված Մաթոս աղան աղոթք էր անում աստծուն և աղաչում, որ վերցնի իր հոգին և վերջ տա իր տանջանքներին։

Մի օր հանկարծ երևաց մահվան հրեշտակը և հայտնեց հիվանդին, որ աստված լսել է նրա աղոթքը և ուղարկել իրեն, որ առնի նրա հոգին։ Մաթոս աղան խիստ տխրեց, միտքի պաթեցավ, սկսեց պատմել, որ նա մեծացրել է ինը զավակ, մեծացրել նրանց զավակներին՝ իր թոռներին, իսկ այժմ մեծացնում է թոռների զավակներին՝ իր ծագերին։ Ծագերը դեռ փոքր են, շատ կրկամենա տեսնել նրանց մեծացած, նրանց մարդ դարձած, ուստի շատ է խնդրում հրեշտակին, որ թողնի իրեն մինչև ծագերի մեծանալը։

Հրեշտակը հարցնում է հիվանդին.

— Քանի՞ տարի ես ուզում այլևս ապրել։

Մաթոս աղան լուռ է, չի պատասխանում։

Հրեշտակը հարցնում է.

— Բավակա՞ն է քսան-երեսուն տարին։

Մաթոս աղան լուռ է, չի պատասխանում։

Հրեշտակը դարձյալ հարցնում է.

— Ասա, ի՞նչքան ես ուզում։

Մաթոս աղան դարձյալ պապանձված լուռ է։

Հրեշտակը հասկանում է, որ հիվանդը շատ է ուզում ապրել և չի համարձակում ասել քանի տարի ուզածը։

Այն ժամանակ հրեշտակը առաջարկում է ուրիշ ելք։ Նա ասում է.

— Ահա այն կողմից մեղ մոտենում է ուղտի սայլը, ես կկանգնեցնեմ այդ սայլը, դու վեր կաց տեղիցդ և քո բութ մատը դիր ուղտի մարմնի վրա, որտեղ ուզես՝ մենք կհաշվենք, որքան մազ կա քո բութ մատի տակը՝ այնքան տարի էլ ես թույլ կտամ քեղ ապրել այս աշխարհում։

Ուղտը մոտեցավ. Մաթոս աղան վեր կացավ տեղից, մոտեցավ ուղտին և իր ամբողջ իրանով, փորով ու պորտով փաթաթվեց ուղտի մարմնին։

Հրեշտակը շվարեց և չիմանալով ինչպես վարվի, գնաց զեկուցելու տիրոջը։

ԷԺԱՆ ՈՒՂՏԸ

Նոյեմբեր ամիսն էր։ Որդին եկավ հայտնեց ծերունի հորը, որ ուղտերը խիստ էժանացել են, որ կարելի է մեկ կոպեկով ուղտ գնել։

Հայրը հարցրեց որդուն՝ ինչքան խոտ ունես։

Նա պատասխանեց, որ ունի միմիայն մի սայլ հարդ։

Հայրը պատասխանեց, որ մեկ կոպեկը թանկ է։

Մարտի մեջ տղան եկավ և հայտնեց հորը, որ ուղտը արժե հարյուր ռուբլի։

Հայրը ասաց, որ դա շատ էժան է և պետք է գնել։

Որդին գնեց ուղտը և սկսեց իր վարուցանքը դաշտում։

ԳԱՐԱԲԵԴԻՆ ԲՈՒԼԻՆԵՐԸ[1]

Խամիշե թեփեյե գեղը ապրող Գարաբեգը և Թաքուշ յանգան մեծ պանի մել ին։ Նաքա աս դարի ախչիգ հարս կանին, ջհեզ

---

[1] Այս առակը լսել ենք Նոր Նախիջևանի Թուխտի գյուղում, Ղուկաս Խարախաշյանից, Խ. Փ.։

թուփ կանին, Թագուշը աս ամառ մեծ տիժարութիւնով մեծցուց 15 հաղ բուլի և հինգ հաղ խաղ։ Կուլզը էգավ. Թաքուշ յանգան սեփեթ գոխից 11 հաղ բուլի, սեփեթին վրա ալ պոնվայով ծածկից, դոռկ արից ու Գարաբեդին հեգ բազար խըրգից ձախելու։ Խազերը թողուց խնամի հարգինքի համար։ Բուլիներուն սեփեթը գոռկը պառցած Գարաբեդը էգավ բազար, դայնեցավ։ Կնոզները վրան թափվեցան, որը դասե, հանե սեփեթեն իդա բուլին, մեմը ցուցուր, կինը ի՞նչ է, մեդալը դասե, հանե ուրիշ բուլի։ Մեգ հաղ աղեգ հաղնված մաշտ ալ մոգդցավ, հեսաբ արավ 11 հաղ բուլի, հարցուց, ի՞նչ գուզիս ամենին, ե՞րբ ըրիդ ձախիս ադ ամենը, ես ալայը մեմեն գըկնիմ։ Գարաբեդը միտք արավ, ասաց՝

— Էկեր ալայը ըրիդ առնուսնը, գուդաս դասը մանեթ։ Կնող աղան ձախս չարավ, ասաց, որ ալայնալ դառնե, չեմը տահմիլ չանելով բազար էլնել, հեդը ստաղ առած չէ։ Դուր, դասը հաղ դանիմ, մեգ հաղ աթա բուլին ալ թո մնա քեղի ռեհին, շինդիս գըպերիմ, ան ալ դառնում։ Գարաբեդը հոժարացավ։

Մաշտը ժեք դաբ արավ 10 հաղ բուլին, դարավ։ Գարաբեդը մնաց աթա-բուլիին հեգ։ Մինչև իրգվան սահաթը հինգը սաբռ արավ, մաշտը չեգավ։ Գարաբեդը կիդեր քի կնող մաշտը անբաղչառ պիդի կա մնացած բուլին առնելու, ադոր համար խիստ հանգիստ էր։

Իրգվան տիմաց, երբ ծին ալ, ինքն ալ քաղցըցան, Գարաբեդը եգ էգավ դուն։

Թաքուշ յանգան տիմացը վազից, գըհարցունե, ի՞նչ էղավ, ինչքա՞ն ստաղ պերիր։ Գարաբեդը ասաց, որ ստաղ պերած չէ, ամա բուլիները խիստ աղեգ ձախիլ է 10 մանեթի։ Թադմից, որ կնողը 10 հաղ բուլին առավ, մեգ հաղը ռեհին թողուց, ստաղի կնաց, մեմալ չեգավ։

— Վա՜յ, գանչից Թաքուշը, գորավ սաղ ամառվա աշխադանքս, խափիլ ին։

— Հայվա՜ն, ես նարան խափեցի, դասնը-մեկ հատ ձախեցի, մեգ հաղը չղվի, հանա, աթա-բուլին հոս է, կուկա էտևեն,— պատասխանից Գարաբեդը։

— Նի՜ստ, նայե ջամփան,— ասաց Թաքուշը ու լալեն նես կնաց։

ՍԱՄՎԵԼԻՆ ԱՌԱԿԸ[2]

Մեզիմեն շաղ առաչ, սուդ չասիմ, վեց յա օխտը հարուր դարի առաչ, հայերուն Խրիմ աբրած ադենները, դար մեգ հաղ նամ դված քաղաք, անունըն ալ էղիլ է Սոլխաթ չենե Սուրխաթ, հաստատ կիտցող չըկա։ Մեգ հաղ մեծ կիգնագան ալ դասե, որ ադ քաղաքի անունը էղիլ է Սուրբ-Խաչ իդա թալիացիք իրենց թլվաղ լիզուով Սուրբ-Խաչը տառձուցիլ ին Սոլխաթ։ Ինչ և իցե, էղիլ է ադրես քաղաք։ Ծարեն մեչը արբոդները էղիլին չեմը հայերը, համա վերջը էդան լցվեցան խըփչախները, նացամեն էդև թալիացիք և թաթարները, քաղաքը խիստ մեծցավ։ Հոդ գաբրեին առևդրականներ և ամեն չեշիթ զենիաթի մաշդ։ Հոդ կըլային խոշոր յառմալըխներ, սաղ աշխարքեն կուկային վաջառագաններ։ Հայերը հոդ կպերեին Հինդաստանի աբրանք, դևեներով գեշթային ու աբրանք կրպերեին։ Զենիաթի մաշտիկը կըլցնեին քաղաքը օսկի ու արձաթեղեն արբանքներով, դաբախները գըհանեին գաշիին չեշիթ-չեշիթը, դեմիրճիները, այախուրճիները, փագեղենի վարրեդները, ամեն-ամենը կրպերեին իրենց արբանքները։ Մըսրա Մելիքը հոս կըխրգեր իրեն գեմիները արբանքով պառձած։ Նա անքան հավնիլ էր Սոլխաթին, որ հոս խոշտից մեծ մզգիթ, մետրեսե։ Մեգ արաբացի ճամփորդ էղիլ է Սոլխաթ, խիստ գովում է քաղաքը և գրում, որ աղեգ ձիով գես օր է բեդք, որ ման կաս քաղաքին չորս քովը։ Ադ Սոլխաթ քաղաքին մեչը գաբբեր մեգ հաղ հայ խուլումճի Ավեդիք-աղա անունով։ Նա խիստ մեծ վարրեդ էր, նարա արբանքները ձեռքե ձեռք գըքաշեին։ Նա ուներ 9 զավազ, հեդը գաբրեին մարը ու ախպորը օքսուզները։ Նա մեյնագ կաշխադեր և խիստ աղեգ ալ գըբահեր իրեն ընդանիքը։

Ամա մեկ դարիմը Խրիմի մեջ էղավ մեծ խըթլըխ, քաղցաձութին։ Ավեդիք-աղան էրդան տիմացավ, ունիմ-չունիմը թեմիղ ածան կինով ձախից, գերագրից ընդանիքը, համա աշտըխ ձախելու պան չուներ։ Հալխը գեշթար Տաման, հոնեն ցորեն, առփա, չոր ծուկ ու

---

2 Այս առակը լսել ենք Մնացական Պառլաուխյանից։

միս գպերեր, պայց ադոր համար բեդք էր ստագ, որ չուներ Ավեդիք-աղան։ Նարա մեծ դղան՝ Սամվելը, 16 դարեգան էր, աղեգ կիրկաշդում կիդեր և դահա գրսորվենար, վանքի վարժարանը գերթար, վաշտարեդներեն թաս գառներ։ Դեսնելով ընդանիքի տիժար վիշագը, նա առաջարգից հորը ձախել իրեն իբրև եսիր։ Հարը-մարը ուռուֆ էղան, ինչպե՞ս գարելի է մեծ դղին ձախել, նա մեգ-էրգու դարիեն դարող է ընդանիք նայել։ Սամվելը հանգստացրեց ձնողներուն, ասաց, որ էգեր իրեն չըձախին, ստագ չառնուն, ուդելիք չըկընիննը, սաղ ընդանիքն ալ քաղցած բիդ մեռնի, իսկ եթե իրեն ձախին, սաղ ընդանիքն ալ սաղ գըմնա, ինքն ալ սաղ գըմնա, կնողը բիդ ուդեցնե՞ խո։

Քաղցաձութինի զոռին դագը ձնողները հոժարեցին Սամվելին եսիր ձախել։ Խրիմի Կաֆֆա քաղաքը ուներ մեծ եսիրբազար։ Ամեն գիրագի չեռքեղները, գուռֆիները ու շատ դահա ուրիշները կըպերեին Կաֆֆա ձախելու եսիրներ։ Մըսրա Մելիքը գըխրգեր իրեն գեմիները, որ կնած եսիրներուն դանին իրեն մոտ։ Կաֆֆան նստած էր Մըսրա Մելիքի խըսմեթքյարը, որը գնում էր դեսոք ախչիգներ հարեմի համար, դեսոք գղաք մամլյուկների զորքի համար, իսկ հասագավորներին՝ սև աշխադանքի համար։ Գիրագի օրը, դեռ չըլուսացած, Ավեդիք-աղան, Սամվելը, և մարը յոնոմիշ էղան Կաֆֆայի եսիրբազարը։

Առաջինը մոդգցավ Մըսրա Մելիքի մաշդը, իմացավ, որ ձախվում է Սամվելը, նայեցավ ու բաշլայից հարցնել՝—Ի՞նչ կիդե պանել։ Սամվելը ասաց՝

— Ես խուլումճիի դղա իմ, աղեգ կիդիմ ագեղենների կորձը, աղեգ կիդիմ ծիերի կորձը և խոլայ գրհասկնամ մաշդուս ով եղաձը։

Կնողը գեթեր մտցուց ադ ամենը և առանց ձախս անելու կնից Սամվելին։ Բաբան-մաման ստագը առին, Տաման կնացին ցորեն կնելու, Սամվելին ալ դեմի գոխեցին, դարին Մըսրա Մելիքի երգիրը։

Դեղ հասաձներովը ախչիգներին ու յաշ դղոցը ճոկեցին, մեգալոնց ամենքին դարին քարհանա, դվին ձեռքերը խազմա, բել ու բայլոզ, խոթեցին քարի փոսը։ Եսիրները թաց փոսին մեջը քեսմե քար գրհանեին։

Մեգ քանի օրեն եսիրներ պերողը Մելիքին բադմից իրեն պերած եսիրների մասին, ասաց և Սամվելի մասին, որ նա աղեգ գրճաշնա ծի, աղեգ կիդե ագեղենի կորձը և աղեգ մաշդ գրճաշնա, գասե նարա ով էղաձը։ Մելիքը կրից Սամվելին անունը։

Օրին մեգ օրը Մըսրա Մելիքին պերին մեգ հրաշալի ծի։ Ով ասաց, որ ադ ձին հրեղեն է, ով ալ ասաց, որ էրգինքեն է։ Մելիքը հիշից Սամվելին ու գանչից նարա։ Սամվելը էգավ, նայեցավ ծին և ասաց՝ —Ծին խիստ աղեգ է ձմեռվան ու սալխն հավայի համար, ամա ամառվա դաքին նա յարամիշ չի լալ, բիդ վաղե ճուրը բիդ մտնի ու մինչև իրիգվան բաղը դոխելուն ճուրը բիդ նստի։

Մելիքը Սամվելին ասաձը բանի դեղ չըտրից ու ծին կնից։ Կիզին, ծմեռը և պահերին ծին խիստ աղեգ էր, ամա երբ ամառը էգավ, ծին փեռատցավ. նա լուգենը կլոխեն գհաներ, գրփախչեր, ճուրը գերթար ու կոմեշներուն հետ մեգդեղ ճուրին մեջը գրմնար մինչև իրիգվան։

Մելիքը զարմնցավ Սամվելի ասաձին։ Նա հրաման դվից Սամվելին օրագան հացը հարուր գռամ ավելի դալ։

Քիչ մը ադեն ետքը Մելիքին պերին Հինդաստանի սեմթերեն կնած մեգ հատ մեծ ադ, շադ թանգնոց պան- չըդեսնված քար։ Քարը դեսոք էր, աղեգ գրցոլար, ամա Մելիքը իշկիլի մեջ էր։ Նա նորեն գանչից Սամվելին։ Սամվելը նայեցավ և ասաց՝ — Քարը թեմիզ գոհար ադ է, խիստ աղեգ է, ամա մեջը ոշտ դա։ Կիդիմ, թաքավոր աբրած, չիս հավադա իմ ասաձիս, ադոր համար գրխնթրիմ, որ քարը գես անիք և դեսնիք ոշտը։ Պերին խուլումճի, քարը գես արավ, մեջեն ոշտ տուս էգավ։ Մըսրա Մելիքը զարմացավ։ Նա նորեն հրաման դվից, որ Սամվելին օրական հացին քաշը դահա հարուր գռամ ավելցունուն։

Մելիքը սաղ ժամանագը բեթեր զարմացած էր Սամվելին կիգուն էղաձին վրա։ Նա նորեն փորձից Սամվելին։ Նա միտքը բահիլ էր և, որ Սամվելը աղեգ կիդե մաշդ ճաշնալ։ Նա հրաման արավ, որ Սամվելին պերին իրեն քովը։

Սամվելը էգավ քիչ մը դրգում։ Մելիքը դեղեն էլլավ, ասաց Սամվելին՝ —Տուն կիգուն իս, ասիլ իս, որ աղեգ գրճաշնաս մաշդ արարաձին։ Ասա, խնդրեմ, ո՞վ իմ ես և ինչբե՞ս մաշդ իմ։ Սամվելը պատասխանից՝

—Դուն թաքավոր իս, աղեգ ալ մաշդ իս, ամա թաքավորական ցեղի չիս, քու մեջդ թաքավորի արուն չըկա, ցինգանայի ձաքում

ունիս։ Մըսրա Մելիքը գադղեցավ ու հրաման դվից՝ դանել տուս ու գախել։ Սամվելը տառձավ Մըսրա Մելիքին՝

— Թաքավոր աբրած, մեռնելես առաջ մեգ հաց խնթիրք ունիմ։ Ինձի գախել տուք միշտ գարող իք, ես գխնթրիմ Ձեզի իմ ասաձիս շիգակ գամ ձուռ ըլալու մասին հարցունել Ներմամային։ Մելիքը միտքի բաթեցավ։ Միտք անելեն էդև ասաց՝ — Սամվելին ասոր գախել բեդք չէ, ժամանագը կանը, ես գասիմ։

Սամվելին դարին, Մելիքը մնաց մեյնագ։ Նա դանչից իր մոտ մորը։ Նա սաստիկ նեղացած բագմից մորը, որ եսիր Սամվելը դասե, թե ես՝ Մըսրա Մելիքս, թաքավորական ցեղե չիմ, հաբա ցինդանայի արուն գա մեչս։ Սամվելը քեղի վդա գըտնե, ի՞նչ դասիս ադոր տառծը։

— Տուն կիդի՞ս, որ քեղիմեն մեձ վեց հադ քուր ունիս։ Մելիքը հայտնից, որ կիդե։ Մելիքին մարը հարցին բադասխան գալու համար խնթրից ժեք օր ժամանագ։ Ժեք օրեն էդև Մելիքին մարը, ձեր ու աստվաձավախ գինմաշգ, չուզենալով սուդ ասել և յաշ Սամվելին մահը մգնել, ասաց իր ոշդուն՝

— Բաբադ ալ, ես ալ խիստ գուզեինք մանչ ղավադ, որ նստի Մըսրա Մելիքի գահը և տնե կլխին նարա թաքը։ Հագառագ մեր գամբին, ես բերի վեց հադ ախչիդ։ Ալայ ումեթներս օխտնումին վրան էր։ Բաբադ ուներ հարուստ ցինգան պարեգամներ, որոնք ամեն դարի կուկային մեզի միսաֆիր, 5—10 օր գըմնային մեր սարային մեչը, քեֆ գանեին բաբայիդ հեդ։ Օխտնում զավագս ընձայած օրը ցինգանային մեգին գնիգն ալ դղա պերից։ Իմիսը ախչիդ էր, նարանը մանչ։ Բաբադ առավ մեր ախչգանը դվից ցինգանային, իսկ ցինգանային մանչին դվից ինձի։ Ես նայեցի, իմ գաթովս մեձցուցի։ Ադ դուն էիր։ Ցինգաններուն բաբադ դվից մեձ ստագ, ասաց, որ մեմալ չկան հոս։ Աս սլանը կիդիմ շեմը ես, շինդխ կիդցիր և տուն, պայց պերանդ պոնե։ Մըսրա Մելիքը ապշած ու շադ շնշված Սամվելի իմաստուն լալով, հրամայեց՝ մահվան բադիժը վերացնել, Սամվելի հացի օրական քանագը ավելացնել երրորդ անգամ հարուր գռամով։

* * *

Անցավ մեգ շաբաթ, էրգու շաբաթ, մեգ ամիս, ամա Մըսրա Մելիքը չի կարող հանդըստանալ։ Նա ուզում է իմանալ, ինչպես եղավ, որ Սամվելը իմացավ ծիին ինչպես էզաձը, քարին մեչը ոշտ էղաձը և իրեն ցինգանայի թուխում էղաձը։ Նա հրամայեց Սամվելին բերել իր մոտ։ Մելիքը ինքը սկսեց ասել՝

— Քու դված ժեք բադասխաններն ալ խոշտ դուս էգան, շադ աբրիս, շեմը ասա ինչի, որտեղե՞ն իմացար ծիին կամ ագին ինչպես էղաձը։ Սամվելը պատասխանեց՝

— Թաքավոր աբրած, ծիին ադբես էղաձը իմացա նաբա ագռաներեն։ Նա առանց մոր մնացած խուլուն է, ձըձիլ է կոմեշի ձիձ, ագռաները կոմեշի ագռաներ ին։ Ագին մեչը ոշտ էղաձը հասարագ պան է, ադբես մեձ քարը հանիլ ին շեմը թաց դեղե, իսկ թաց դեղը անբադճառ ոշտ գըլա։ Ձեր քարին մեչի ոշտը աչքով ալ գարելի էր դեսնել։

— Հաբա իմիս ցինգանայի ձաքում ունեցուսաս վտեխե՞ն իմացար։

— Ադ իմացա քուգուդ հարուրական գռամ հաց ավելցուցաձեղ։ Թաքավորական ցեղի մաշդը ադբես մանդռ չի լալ։ Եգ ժեք բադասխաններբուս համար թաքավորը գարող էր ինձի եսիրութինե ազադել, սորվենալու խըրգել, որ իրեն գառավարութինին համար օքտակար մաշդ ըլամ, իսկ տուն շեմը հարուրական գռամ հաց ավելցուցիր։

Թաքավորը կուն դվից, կուն առավ, ասաց՝

— Դուն ազադ իս, եսիր չիս, սորվենալու դեշթաս, շեմը իմ քովես հեռունալու չիս։ Ասա, դահա ի՞նչ գուզիս։

— Ես ունիմ բաբա-մամա, քույրեր ու եղբայրներ Խրիմում, հոն քաղցաձութին է, գուզիմ նացա օքնել։

Մելիքը հրամայից պառնալ մեգ դեմի ցորեն, ալուր, եղ ու միս, շամփել Խրիմ բաբային ու մամային, էկեր ուզենանը, պերել Մըսրա Մելիքի երգիրը ու աբրել իրենց օշգու հետ։ Էգեր ուզենանը, ասեք, որ կալու գարի ալ գըստանան մեգ գեմի աբրանք։ Սամվելը բաքից Մելիքին ծեռքը, կնաց սորվենալու, գեմին Սամվելին նամագով կնաց Խրիմ։

ԲԱԲՈՒՇԻՆ ՁԵՐՈՆԻՆ ՁԱԴՈՒՐԸ[3]

Թեփեն ձագ կեղի արևելքի սեմթի էնգի քենարը, խավալեշ տառամայի բառծ յառին վրան գար մեգ հադ խամիշե թեփեյով էրգան,

[3] Այս առակը պատմել է Հովակիմ Ստեփանի Արաբաճյանը, Խ. Փ.։

219—6

ժեք փենջերեյով քարե դուն։ Դունին տիմացը գայնած էր փուռնդունը այայե թեփեյով։ Առտեղը սաղ ամառը հաց գեփին, գուդին ու գրխրմին։ Դունին էդևը գար քարե առան խամիշե թեփեյով։ Աստեղը ծմեռը կըկարեր Բաբուշին Զերոնը իրեն գավարը՝ եզերը, գովերը և ծիերը։ Զիրոնը ուներ մեծ աղբար, մեչն ալ ժեք հագ խոշոր ուռու ցորենի, առփայի և արիշի համար։

Աս դունը-դեղը Զերոնը բաժին ստացիլ էր ախպարներեն բաժնված ադենը։ Զերոնը ինչ զենդին էր, ինչ ալ խարիբ, խայերով խաղյային էր։ Նա ուներ ժեք ջիֆթ եզ, սաբանը գելլեր իրեն, տուռեն։ Ուներ մեգ հատ ծի, մեգ-երգու գթուն գով, մեգ քանի հագ օշխար։ Ուներ հավ-ճիվ, բուլիներ ու խազ։ Գովերը, թռչունները գառավարողը Լուսբիկա յանգան էր, չոլի պանը գանողը ինքն էր։ Նաքա ունեին չորս մանչ զավագ, 5 գարեգանեն պռնած մինչև 17 գարեգան։ Էրգու հագ մեծ դղաքը աշախ եղի կլոխե պռնող էին, հորը աղեգ յարդմ։ Վար ու ցանի, թաշովի ժամանագ եզ քշողը ղղաքն էին։ Էրիգ-գնիգ խնդում էին, որ ունին ադբես յարդմճիներ։

Մեգ ձմեռ բաշլայից գավարի ցավ։ Սաղ կեղի եզն ու գովը սադգեցավ։ Քաղաքեն գավարի հեքիմ էգավ, նայեցավ, չումա է ասաց, մեգ պան ֆայդա չունի։ Սադգեցան և Զերոնին ժեք ջիվթ եզերը, մեգ հադ գովը, մնաց ջեմը մեգ հատ տանա։ Սադգած գավարին վրան քիրաճ գուլէին ու գրթաղեյին, դաշինալ հանել չէր դային։ Ադ պանը պան չէր, էգավ ավելի մեծ բադուհաս։ Սաղ կեղի բալաչաղան հիվնդցավ բողազի ցավով։ Հիվնդցան Զերոնին ժեք մանչը և մեգ ախչիգը։ Զըհիվնդցավ ջեմը փոքր գղան, 5 գարեգան Զադուրը։ Քաղաքեն պերին էրգան միրուքով մեգ հադ հեքիմ։ Նայեցավ և ասաց, որ դիֆտեռիթ է, ադոր ջարը չըկա, դղաքը ամենքնալ բիդ մեռնին։ Չորս հադ պատանքաճ մեռել էլլամ։ Զերոնին տունեն։ Մնաց մեգ հադ Զադուրը, հարը, մարը կըտողան վրան, գըվախենան, որ նայալ գըհիվանդանա։ Բառավ մեծաները խորհուրթ դվին Զերոնին ու գնգանը՝ Մարիամին, Զադուրին փրկելու համար նարա դալ Քրիստոսին, տառծնել Քրիստոսի սալրամին, Զադուրին փրկելու համար նարա դալ Քրիստոսին, տառծնել Քրիստոսի սալդաթ, ան ժամանագ դերը ինքը գըբաշտպանե անոր։ Ադոր համար դերդերին հեդ մեգ խոսք էղան, նարա ասած սահաթին, դզին ժամ դարին, գայնեցուցին Քրիստոսի կերեզմանին քովը։ Դերդերը էկավ, Զերոնին չոքեցուց Քրիստոսի կերեզմանին սաղ սեմթը, Մարիամին ալ սոլ սեմթը, մոմերը վառեցին, խունդը ձխեցին, դերդեր ու դիրացու բաշլայեցին կաշտալ ու երգել։ Զադուրին կլոխին վրա խաչ տրին, հորը, մորը աղօթք անել դվին, էնգ վերջը ասին, որ Զադուրը աշտխ Քրիստոսի զավադ է, Զերոնը և Մարիամը բարդադան ին ամեն շաբաթօր իրգվան ու գիրագի դզին ժամ պերել, մոմ վառել և աղօթք անել, մազերը չըդդրել, լվանալ ու սանդռել։ Դունը ժեք հադ խոռող մոշթեցին, մադաղ արին։ Ժամեն ետքը դերդեր-դիրացուլով դուն էդան։ Մատաղը ուդելներեն ետքը Զադուրին սաղ անգաչը սոխով աղեգ դրորեցին, գագող դեղը ձագեցին և արծաթե օղ հաքուցին։ Դերգերը նորեն օրհնից Քրիստոսի դզին և ստանալով իրեն հախը, դուն կնաց։

* * *

Զադուրը կըմեձնար։ Մազերը արձակած էղաձին ու անգաչը օղ ունեցածին համար օշտախ դղաքը վրան գըխնդային, ախչիգ իս դասեին, գըլացունեին։ Նա դուն գուքար, մորը գըբադմեր, սամա մարը կիդեր դզին հանգըստացնել։

Ասպես անցավ 5 դարի։ Զադուրը էրգան մազերով, սև աչքերով գեսօք դղա էր, բաբան ու մաման վրան դըտոզային։ Երբ որ Զադուրին դասը դարին լմնցավ, բաբան-մաման նորեն բաշլայեցին դերդերին էշթալ, բեդք էր Զադուրին Քրիստոսեն եդ առնել, աշտխ կործի տնել, կեղացուցին սորվեցունել։ Մարիամը չոխտան հազիր էր։ Նա մեձցուցիլ էր աս դարի 13 հադ բուլի։ 10 հագը ձախից քաղաքի բազարը, ստադ հազիր արավ Զադուրին եդ առնելու համար։ Ադոր համար նա կեղի չոբանեն մադաղի համար կնից մեգ հադ խոչխառ օչխար։ Շաբաթօր իրգվան խոչխառը դվին ժամգոչին վաղվան մադաղի համար։ Խոչխառին հեդ դվին էրգու հագ հաց և մեգ ֆունթ աղ։ Դերբան իրգվանե օրհնից մադաղը։ Մեմալում օրը, գիրագի առդուն, Զերոնը, Մարիամը ու Զագուրը թեմիզ հաքնված, կնացին ժամ, գայնեցան Քրիստոսի կերեզմանի քովը։ Բադարաքին վերջը դերբան շուրջառը վրան, բուրվառը ձեռքը մոդգըցավ Քրիստոսի կերեզմանին, ծնգեչոք արավ Զերոնին, Մարիամին և Զադուրին։ Էրգան կարդալեն ետքը,

մեծ գերոնով շանդանին դակը պերից Զադուրին, օրհնից, խաչը բաքնել դվից և մդրադով դդրից նարա մազին մեկ սեմթը։ Գդռած մաղը դվից մորը, չոքած դեղերեն հանից, ճաշագից ժեքին ալ, ասաց, որ դերը եդ դվից Զադուրին։ Մնոդները արդասվելով, էլլան դեղից, համփուրեցին դերբային աչը, համբուրեցին իրենց ղավագին և ամենքը միասին էգան ղուն։

Դանը լիքը ժողովորդ էր։ Էգիլ էին բոլոր ազդագանները և պարեգամները, ամենքը պերիլ էին իրենց գովերի գիրագի օրվա գաթը, հավաքել խոշոր կաթսաների մեշ և եփել գաթնապուր, բերիլ էին և գաթաներ գաթով ուգելու համար։ Զերոնը և Մարիամը մորթել էին մեկ օշխար, մատաղ պատրաստել էկողներու համար։

Կեղի բերբերը մգրադը ծեռքը նստած սպասում էր Զադուրի դուն կալում։ Դերդերը Հայր-մեր գարթաց Զադուրի կլխին, իսկ բերբերը գդրից նարա երգար մազերը։ Դերդերը հայդարարից, որ Զադուրը նորեն բադգանում է իր հոր ու մորը, որ Աստված փրկեց նրան։ Բաբան, մաման ու միսաֆիրները ամենքը բաքին Զադուրին։ Դերդերը օրհնից մատաղը և էփած դաթը, ամենքը նստան սեղան։ Մադաղը և գաթնաբուրը գերան, էլլան սեղանեն, գամաց-գամաց ամեն մարդ կնաց իր գունը։ Ասով վերջացավ Զադուրին Քրիստոսին եդ առնելու կործը։ Զադուրը նորեն իր հոր-մոր ղավագն էր, ջեմը անգաշի օղը մնաց, ան հիշադագ էր անցած-կնացած անբախտութիններին։

* * *

Զերոնը և Մարիամը պարիներեն ու ղավդներեն զըրգվելեն վերչը մեմալ ոտքի չիգայնեցան ու մեմալ նացա տուռեն ժեք ջիվթ լծած եզ, ժենց սաբանը տուս չեգավ։ Զերոնը վարուցանի ժամանագ գեշթար յարդմ անելու իրեն սոյերին, անոնք ալ ադոր դեղը դրցանեին նարա համար 1—2 լուռ ցորեն, մեգդոմ ալ բոստան։ Մարիամը աղբարը գըրցաներ կառտոպլի, սոխ, սխտոր զարզավաթ, գբահեր հավ-ճիվ, խաղ, բուլի, գաբրեին մի գերբ։ Զադուրը անկործ դանն էր։ Նա գոճ խաղալեն բեզմիշ էղիլ էր։ Նարա ղարիքը դղաքը իրենց խարալթիին մեչը բաբաներուն հետ գրպանեին, չոլ ալ գեշթային, գավար ալ գընայեին, եղ ալ գըքշեին, մեգ խոսքով կործի էին, բաբաներուն կործը գբսորվենային։ Զերոնը, Մարիամը չունեին իրենց քուլիքը, իրենց խազայաստվան, որ Զադուրը սորվենար ցանի կործը։ Ըղաթ դալ Զադուրին նաքա կըմեղքընային։ Կեղին մեչը գար մեգ հագ վարժաբեդ, ամենքը գըկովեին անոր։ Նա ցան ալ գրցաներ քիչ մը, ուներ գով, ծի, ինքը գվարեր ու գրցաներ։ Զերոնը և Մարիամը կումպաս արին— խնթրել ադ Մելքոն վարժաբեդին, որ առանց հախի առնե Զադուրին ու կործ սորվեցունե։ Զերոնը կնաց Մելքոն վարժաբեդին բադմից իրեն ուզեցածը։

Վարժաբեդը Չէ չասաց, ամա ասաց, որ նարա կործը փոքր կործ է, նա հախ դալ չի կարող, դղին ընթունել, նայել և սորվեցունելու հոժար է։ Մեմալում օրը Զերոնը և Մարիամը Զադուրին աղեդ հաքվեցուցած, հալավները բոխչա արած դարին վարժաբեդին։ Զադուրը 11-ը լմնցուցած, 12-ին մեչն էր։

— Հանա, աչքերուս մեչը նայած մեգ հագ զավագներս, միսը քեղի, օսկոռը մեզի, ղավագիդ պես նայե, մաշդ արա, ծերուքը մեգ կըգոր հաց թող ունենա։

Վարժաբեդին գնիգնալ վարժուհի էր, նաքա Զադուրին խիստ աղեդ ընթունեցին, խոշտ որ իրենց դղին բես նայեցան։ Նաքա ունեին մեգ հագ ծի և մեգ հադ գթուն գով։ Զադուրը օրը ժեք անքամ ծին դանում էր չորվախ ճրելու։ Ին շադ խմում էր չորվախի բըլբըլայեն, ձարեն կլոխեն բռնած գրդաներ, վերչը բաշլայից հեձած դանել։ Իրգվանները գեշթար դավարին տիմացը, գովը դուն գըպերեր։ Առչի անքամը Զադուրին չոլ դարին խոդի օրախին ադենը։ Վարժաբեդը չալղը գըքաշեր, վարժուհին ու Զադուրը յոլախ գրժողդեին, դոշղեզ չիչակ թոփ կանեին, խոտը տռնավուճով թոփ կանեին։ Զադուրը խիստ ուրախ էր։ Շաբաթը մեմը դուն գեշթար, մարը գըլվանար իրեն ալ, վրայի հալավն ալ։ Ասպես Զադուրը 8 դարի գաշխադեր Մելքոն վարժաբեդին դունը։ Էրգու գողմն ալ պավագան էին իրարմե։ Զադուրը աշդխ բետքին բես կիդեր վարելն ալ, ցանելն ալ, տափել ալ, ընձել ալ, թաշով անել ալ, գալսել ալ, մեգ խոսքով ամեն պան, ինչ որ բետք էր հողակործին, նա կիդեր։ Մարը աշտխ գուզեր առնել, ամուսնացնել ու մեգգեղ աբրել։ Ամա խեղճ Մարիամը իր մուրադին չհասավ։ Էրդու օր հիվանդացավ, ժեքում օրը մեռավ։ 18 դա-

ռեկան Զերոնը մնաց մեյնագ։ Ախպորը գնիգը կուվար, հացը դեփեր, լվացքը գաներ, հավը-ճիվը գըդառավարեր։ Ամա մեգ քանի ամիս անցած-չանցած, ժամեն դուն էգած ադենը Զերոնը ինքն ալ ինգավ սոխախին մեչը ու մեռավ։ Զերոնին գունը քոռացավ։ Զադուրին էմջեն և Մելքոն վարժարեղը խորհուրդ դեսան, կդան, որ Զադուրին բետք է կարկել ու դուն-դեղ անել։ Ադոր համար բետք էր 200—300 մանեթ ստագ։ Բետք էր գունը նորոգել, գով կնել, հարսանիք անել, ըղաթ չըլալու համար քոլլուք ծեռք պերել։ Ստագ չեմ անելու համար խրագ դվին Զադուրին էշթալ հոսեն 25 վերստ հեռու կդնվող էրգաթե թեփեյով կեղը և պանել մեգ դարի։

Վարժարեդը աղեդ հաքվեցուց Զադուրին, դվից մուշտադ, գոշիդ, խալաթ, կդակ, կառտուզ, էրկու ջիվթ շարիք-վարդիք և ջամփա գրից։

Զադուրը էգավ էրգաթե թեփեյով կեղը, մդավ մեգ հադ աղայի քով վարուցանք անելու 130 մանեթ տարին։ Դարին անցավ, Զադուրը ստացավ 130 մանեթը։ Հեսապ-քիթապ արավ, դեսավ, որ սադ ստագը քիչ է իրեն ուզեցած պաները անելու համար։ Բետք էր մեգ դարի տահա ձառայել։ 130 մանեթն ալ վրան քալցնելու գըվախենա, վդեխ բահելուն ալ չգիտե։ Նա գալաճի արավ մեգ հադ բառավ գինմաշդու հեգ, նա ասաց, որ աստեղը գա մեգ հադ Հերուսաղեմ կնացած հաջի բաբի, նա գըբահե և երբ որ ալ բետք լա գուդա եդ։ Զադուրը կնաց հաջի բարիին։ Նա խիստ աղեգ ընթունից Զադուրին, ստագը առավ և ասաց, որ երբ ալ ուզենա, դարող է ստանալ։ Զադուրը մդավ նոր ձառայության։ Դարին անցավ, ստացավ նոր 130 ռուբլի։ Էգավ բարիին, որ ստանա 130 ռուբլին։ Հաջի բաբին փախ դվից Զադուրին, ասաց, որ նա նարամեն մեկ քապիկ ալ առած չէ։

Խեղճ Զադուրը տուրս եգավ հաջիեն գես մեռել, գես սաղ։ Նա շվարած էր, չկիդեր ի՞նչ անել, մնալ դահա մեգ դարի, գենե մեգ սեզոն բանել, եթե մնալ, աս նոր հախը— 130 մանեթը վդե՞խ բահել։ Իդաբես խասևեթով, ախ քաշելեն Զադուրը գայնեցավ մեգ հադ էրգու խաթնոց գունի սալխնին մեչը։ Վերեն նայեցավ գունի յանգան։ Նա հասկըցավ, որ աս մաշդուն կլոխը մեգ անբախտութին է բադհած։ Գանչից պանվորին, ասաց՝ — կնա, իդա մաշդուն նես պեր։ Զադուրը էլլավ և բադմից յանգային կլոխը էգածը։ Ցանգան հանգստացուց Զադուրին, ասաց՝ —մի վախենա, քու ստագը գառնունք եդ։ Ցանգան առավ մեգ հադ սունդուխչա, մեչը շարից իր բռիլիանտ օղերը, մարգարիդե խուլանը, խոշոր թանգնոց քարերով մադնիները, օսկի սահաթները, ցեպերը ու շադ պան։ Ցանգան ասաց՝ — ես աս ամենը կըդանիմ հաջիին և գասիմ, որ պերիլ իմ բահելու։ Նա կիդե, որ էրիգս խոիթի կնացիլ է Մոսկոֆ, գասիմ, որ ես ալ ըրիդ էշթամ, կըխընթրիմ, որ նա բահե աս ամենը։ Տառնալով Զադուրին գասե՝ — ես նես մդնելես մեգ շարեգ սահաթ անցած, տուն գուկաս և դասիս՝ — ես մեգ դարի առաջ գվիլ էի բահելու 500 մանեթ, ասոր ադ ստագը բետք է, դուր խնթրեմ։

Տառնալով պանվոր ախչգան, հրամայում է, Զադուրեն 10 մինութ եդքը մդնել և ուրախ գանչել,— յանգա, աղան էգավ Մոսկոֆեն, ջուդ արա, դուն արի։

Ցանգան սունդուխչան ձեռքը մդավ հաջիին դունը։ Պացից սունդուխչան, ցուցուց մեչի աղեգութինը, ասաց, որ պերել է, խընթրում է բահել։ Հաջին հիացած ասաց, որ հոժար է պահելու։ Ցանգան սկսից սունդուխչային հանել բռիլիանտ օղերը, թանգնոց մադնիները, խուլանը և շադ ուրիշ պաներ, տուրը պացվեցավ, Զադուրը նես ինգավ։

— Հաջիպա, ասաց, դվեք խնդրեմ իմիս բահելու դված հինգ հարուր մանեթը։

— Նա, բալաս, ասաց հաջին և դվից Զադուրին 500 մանեթը։ Զադուրը ստագը ճեբը տրած-չըտրած, էգավ յանգային պանվոր աղչիգը և բաձռ ձանով գանչից՝

— Ցանգա, աղան էգավ, շուդ արա, դուն արի։ Ցանգան ամեն պան ժողոտից սունդուխչային մեչը, ասաց, որ շինդխ ինքը եշթալու չէ, գարող է դունը պահել։

Ցանգան ալ, պանվորն ալ, Զադուրն ալ ուրախություններեն չափ դըզարնին։ Նացա հեդ չափ գըզարնե և հաջիրան։

Ցանգան հարցրեց հաջիին՝ — Մենք ուրախ ինք մարդուս էգածին, տուն ալ ինչո՞ւ չափ գըզարնիս, ինչո՞վ ուրախ իս։

— Ես ալ զարմացած իմ ձեր վարպետ ինձի խաթածովը, պատասխանեց ձեր հաճին։

ՆՈՐ ՀԱՐՍԸ[4]

Հինութքվան պան է։ Էրիգ-գնիգ գըլան, մեքադ ալ դղա դունենան։ Աշտխ դարիքները էպպեյի կլոխները առած գըլա և դունի պանը՝ ջուր պերելն է, չէ դուն-տուս անելն է, յա չենե հաց էփելն է շտև տիժարներուն կուկա։ Էրիդ, գնիդ խորհուրդի գնստին։

— Արի, դղին կարկինք,— գասե էրիգը, — ծերութներս սա դունի պանեն ա լանը քխալսինք։

Գնիգը ըրազի գըլա։ Կպռնին դղին կկարկին, նոր հարս կպերին, ան ումեթով, որ դունի պանեն ալ լանը ազադին։

Գանցնի մեգ շապատ, էրգու շապատ, մեգ ամիս, նոր հարսը գհինանա հայ-հայ, հիչ դունի պան չանի։ Գենե առաջվան շարքով բիանան գամ ըիաթան կեշտան ջուր կպերին, գունը գավլին-գըժողոտին, դերագուրը գանին, մեգ խոսքով գունի ըեդքին գըմանկան։ Հարսն ալ քըսանդռվի, քըշոյվի, քըշըփվի, խամերեյին վրա գնստի։

Մեգ օրըմ ալ դնստին էրիգ-գնիգ և միտք դանին քի, ինչպես անին, որ հարսին ջուրի խրգին։

— Հայդը արի,—գասե գնիգը,—էլլինք հայաթը, ծուռփադին վրան ծեծգվինք. նա ամշցածեն ա լանը գեշթա։

Ադրես ալ գանին։ Գելլին հայաթը և գրաշլային էրիգ-գնիգ ծեծգվելու։ Էրիգը դընգանը գասե «ասոր քու սրադ է ջուր պերելու», գնիգն ալ՝ էրգանը։ Հարսը գըլսե, տուռը արալըխ գանե, կլոխը գըհանե տուս.

— Սա, բաբա, ինչի՞ իդոր համար գըծեծգըվիք,— գասե,— ասոր տուն կնա, վադն ալ մամաս գէշթա շտե։— Գասե ու տուռը քըփագե, գըմուդնու նեսս։

ՄՆՐ ՀԱՅԸ ՉԻ ԹՐՈՋԻ

Կեղացին քաղաքին մեջը պարեգամ դուններնա։ Մեգ անքամ քաղաք կուկա, պարեգամին դումը։ Քաղաքացին հացի ձան գուղա։ Տիմացը պարագ-պարադ դիլիմով մանդռած հաց կտնե։ Կեղացին գառնու ու էգև-էդևի գուդե՝ դիլիմը մեգ պերան գանե։ Մեդալ օդայեն ալ քաղաքացիին աղջիկները գնային, գըդեսնուն կեղացիին հաց գերածը ու դասին.

— Հացը թրռավ։

Ժամանագ անցնելեն վերջը քաղաքացին կեղ կուկա։ Կեղացին դըրարեղ կըտընե։ Նա հացը հաստ-հաստ դիլիմով գըմանդրռե ու գասե քաղաքացիին.

— Գիր, պարեգամ, մեր հացը թրռչել ադեթ չունի։

ԸՌՀԱԹ ՄԵՌԻՐ

Մեգ ձեր մաշդ մեռնելու մոգիդ գանչից իրեն գենճ գնգանը ու սկսից խորհուրդ դալ, որ իրեն մեռնելեն ետքը շադ սուք չանե, հաբա կարկվի. միայն խնթրից՝ որին գուզե թող էշթա, տեք ֆելանին թող չէշթա, անոր համար, որ ադ ֆելանը շադ դանշիլ էր իրեն։

— Չէ, չէ. տուն ըուհաթ մեռիր, ես նարա գնիդ չիմ լալ, ղերե ուրիշին խոսք դուվիլ իմ աշտխ,— ասաց գնիգը։

ԹՐԼՎԱԴՆԵՐԸ

Մեքադ գինմաշդ գունենա ժեք էգած հասած ախչիգ, ժեքն ալ թրլվադ, լիզուներուն ծարով։ Մեգ օրըմ մարը գասե.

— Ախչիգներս, ասոր մեր գունը խնամիներ բիտ կան, ձեզի նայելու։ Նայեցեք, սախտ գեցիք ու դալաճի չանիք, որ թրլվադ էղածներդ չիմանան։

Ախչիգները խայիլ գլան։

Իրգվան, խոշթ որ, խնամիները կուկան, գնային, ժեքն ալ էրեսանց հով չին։ Կուզենան փորձել, իմանալ դալաճի կիդին չենե չէ։ Խոսք կխառնին, համա ախչիգները մորը խրադը դահա միլքերը գըլա ու ձան չին հանիլ։

Մեմալ նայիս, իգա ժամանագը մեքադ մուգ զըխի ծագեն գելլե ու գըվազե դունին մեչը։

Մեձ ախչիգը գըդեսնու ու գըգանչե.

— Հաթա, հաթա (հաքա), մուդը, մուգը։

Օշթանճա ախչիգն ալ գասե.

— Հաթա, մուգը ծագը մըդավ։

Փոքրն ալ դոյա չուզե խառնվել ու գալաճի անել, գասե.

— Ես ինչ դասիմ (գասիմ), ինչ դըլսիմ, դըզըլ-դըզըլ գըմանիմ (գըմանիմ)։

Խնամիները գըհասկնան, որ ժեքն ալ թլվադ ին, մնաս պարով դասին ու գէշթան։

---

4 Այս և հաջորդ առակները (մասալները) գրի են առել Մ. Լյուլեջյանը և Շ. Շահինյանը Նոր Նախիջևանում, Ջալթր Թոփտի, Մեծ Սալա, Փոքր Սալա և Նիսվիթա գյուղերում, 1957 թ.։

ԲԱՐՏՔ ԳԸՄԸՆԱՍ

Մեգ մաշդ ճամփան հանդըբեցավ իրեն մեգ ձանոթին։

— Ա՛, պարև՛,— ասաց նա,— ես ալ քեզի կուկայի։ Ինչ աղեկ հանդըբեցանք։

— Ի՞նչ գա։

— Ախպարըս, քսան մանեթ բարտք ունիմ, խիստ բետք է։ Գաղաչիմ, մեգ-էրգու օրվան գաս նը։

— Խունդումով գուդայի համա, իմիս ունեցածրս ալ դասնըհինգ մանեթ է,— գասն ծանոթը։

— Ջարար չունի, ախպարըս, տուն շինը դասնըհինգը դուր, հինգն ալ բարտքդ թոլա, վերջը գուդաս։

ԽՈՐԱՄԱՆԴ ԿԵՂԱՑԻՆ

Մեգ կեղացի գելլե Նախչեվան քաղաք գեշթա, գեշթա իրեն պարեգամին գունը ու գերագուրի ռաստ կուկա։ Քաղաքացի պարեգամը ադ օրը խաշըխ-բերեք էփած գըլաւ Կեղացի մաշդուն գերագուրի գգանչին։ Կեղացին շադ քաղցած գըլա ու գըբաշլայե շաթալին վրեն ժեք-չորս բերեք առնելով ուդել։

Քաղաքացի գին-մաշդը՝ դունի սայախլըն գըդեսնու կեղացիյին արած պանը, գը հարցունու.

— Ասվադուր աղա, ծեր կեղի մեռելները քանի-քանի՞ հատ քըթաղին։

Ասվադուր աղան գըհասկընա գին-մաշդուն ասածին միտքը ու գասե.

— Մեռելը կիդե. մանդրռ լանը ժեք-ժեքադ ալ քըթաղինք, չորս-չորս ալ։

ՄԻԱՄԻԴ ԿԵՂԱՑԻՆ

Մեգ կեղացի գեշթա քաղաք, իրեն պարեգամին դունը։ Քաղաքացին նարա խաֆեյով գըհարգե։ Կեղացին, որ խաֆե ու չայ հիչ խմած չէր ու ճեմը չային անունը լըսիլ էր, խաֆե խըմելեն եդքը գասե.

— Պարեդամ, էշ կեղացի է, չիդե չասիք, չայերուդ դակը առած էր (էրված էր)։

ԷՐԳՈՒ ԴԵՍԸ ՄԵԴ ԳԱՆԵ

Մաշդուն մեդին էրգու գնիդ բահելուն համար օրենքի դանչիլ էին։ Տադավորը հարցուց.

— Քեզի ի՞նչը ստիբից ադբես հանցանք կործելու։

— Ես իմ արածրս, բարոն տադավոր, ամենևին հանցանք չիմ հեսաբի,— ասաց մաշդը,—և իմ ունեցածս ալ հիչ էրգու գնիդ չէ, հապա մեգ հատ։ Անոր համար, որ ի՞նչ պան է իսկաբես գնիգը։ Ադ ես ալ կիդիմ, տուք ալ կիդիք, ամենքն ալ կիդին, որ դնիգ ասածդ գես մաշտ է. դասին՝ իմիս գեսս, յա չենե, իմիս թանգակին գեսս։ Ես ալ գուզեյի սաղ դընիգ ունենալ, ադոր համար ալ էրգու գես առի, որ մեգ հադ սաղ լա։

ԲՈՐԴՈՎ ԸՆԴԱՎ

Շադ հին ժամանագ մեգ Մաթոս անունով ձեր մաշդ գըլա, անքան ձեր, որ տարիքին հեսաբն ալ չիկիդնա։ Մեգ օրըմ ալ աստված քըխրգե Կաբրել հրեշտագին, որ ադ Մաթոսին հոնքին առնու։

Հրեշտագը կուկա ու Մաթոսին գասե.

— Մաթոս, հազիր էղիր, աստված խըրգից, որ հոքիդ առնում։ Մաթոսը գասե.

— Սաբրռ արա, ես ասածումեն դահա գյանք բիդ ուզենամ, աբրել գուզիմ։

Հրեշտագը հոքին չառնու։ Մաթոսը քըխընթրե աստուծմեն, որ իրեն գյանքը էրգընցունու։ Աստված խայիլ գըլա ու գասե.

— Աղեգ, դիր բաշ մադդ դեվեյին վրան, մադիդ դագը քանի հադ մաղ լանը, անքան դարի դահա գաբրիս։

Մաթոսը մադը տընելուն դեղը սաղ բորդով գըյնի դեվեյին վրա, որ մաղ շատ լա։ Շտե ադքան աքահ գըլա։

Անօրվանեն աքահությունը ցուցունելու համար է, որ դասին. «Մաթոսին բես բորդով մի ըյնիլ», կամ «Բորդով մի ըյնիլ»։

ԳԱՄՔԻ ՀԱԳԱՌԱԳ

Մեգ հանցավորի գախաղան բիդ հանեյին։

— Ինձի բիդ դախին մեգ անբեսի հանցանքի համար, որ արիլիմ իմիս գամքիս հագառադ։

— Ջարար չունի,— բադասխանեցին նարա,— քեզի գախածներն ալ քուգուդ դամքիդ հադառագ է։

ԽԱԼԻԲԻՆ ՀՈԳՈՒՆ

Զալթրցիք ու թոփտեցիք իրենց մեչեն մաշդիկ հնտոեցին ու խրգեցին Պետերբուրդ, որ իրենց ֆողի ճենգը սենատին հայտնին ու խնթիրք անին Նախչեվանի զենգիններուն ղաֆթ արած ֆողը նորեն իրենց տառծունելու համար։ Քշերով հասան Պետերբուրգ և թոփով ման կուկային սոխախով։ Կուկան մեքադ մեծ դունի քով։ Կնային դունը խիստ լուսավորված, ժառընգած է, իրենք իրենց մեչը գալաճի գանին ու մեգամեգու գրհարցունուն.

«Ի՞նչ դուն է աճափ իղա դունը»։

Իդա սրհաթին մեքադ քաղցած հայ ստուդենտ գը մոդգընա իգա դունին և տացա գալաճին գըլըսե։ Գրհասկընա, որ ասոնք միամիդ, պան չիդեսած կեղացի մաշդիք ին ու միդքեն կըտընե տացա սըտակով փորը քըշտացունել (ան դունը, որին քովը որ գայնած էին կեղացիները, մեծ գասթինից էր)։ Ստուդենտը գը մոդգընա կեղացիներուն և դասե.

— Կեղացի աղաներ, ինչի՞ չիք մուդնուլ, գայնիլ իք, գեցիլ իք։

Ի՞նչ գա որ աս դունը,— գասին կեղացիները։

— Ասոր հոս Խալիբին հոգեհացն է՝ դարի գանին։ Մուդնունք, ես ալ հոս էգիլ իմ,— գասե։

Կեղացիները խունդում գըլան ու գըմուդնուն հոգեհաց ուդելու։ Ադ քաղցած ստուդենտը գընըստեցունու կեղացիներուն մեգ սեղանի առչև ու բոլեն-բոլ պերել գուղա սիրդին ուղեցած գերագուրները։ Գուդե, քըխըմե, քըքըշտանա, «ես շինը կուկամ» գասե, տուս գէլլե ու հայդա—բաբամ քըփախչի։

Կեղացիները քիչ մը սաբըռ զանին, գընային ադ դըղան չի կանը, գելլին դեղերեն ու էշթալու հազիր գըլան։ Գրգանչին իրենց գերագուր պերողին ու դասին.

— Հայդա, կատան ալ տուր, էշթանք։

— Ի՞նչ կատա, ի՞նչ բան,— գասե մաշտը,—գերած պաներուդ ստագը դուվեք, կնացեք։

Խեղճ կեղացիները գրհասկընան, որ ադ ստուդենտը իրենց խափիլ է, ստագը գուդան ու Խալիբին հիշադագը անիծելով, տուա գելլին։

ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մեզ մաշդ սովորութին արիլ էր ու քըսան դարի շարունադ իրգվանները գեշթար իրեն մեռ պարեգամ գինմաշդու դուն ու ժամանագը հոն գանցուներ։ Էղավ, որ ադ մաշդուն գընիդը մեռավ։ Պարեգամները ամենքն ալ խորհուրդ գուդային, որ կարկըվի ալը գինմաշդուն հետ։

— Չէ, ադ լալու բան չէ։ Շինխընգերի ինձի համար անգարելի է ունեցած սովորութիւնես վաղ գալը։ Աս քանի դարի է, որ շարունադ իրգվանները գեշթամ, նարա դունը գանցունում ժամանագըս. էգեր կարկըվիմնը հեդը, հաբա անդից վդե՞խ բիդէշթամ,—կբադասխաներ մաշդը։

ԱԳԱՀ ԴԵՐԴԵՐԸ

Դերդերը ճուրը ընգիլ էր, քըխըխտըվեր հայ-հայ ու ճեմը ծեռքը գերվար։ Ճուրին քեռարեն գանչեցին. «Դերդեր, գերդեր, ծեռքըդ դուր, հանինք»։ Նա ծեռքը քաշից ճուրին դագը։

Մաշդիքը դեսան ու գանչեցին նորեն. «Դերդեր, դերդեր, նա, նա ձեռքըս»։ Դերդերը համան էրգու ձեռքն ալ հանից ճուրին գագեն ու էրգընցուց։

ԱՆԳԱՐԵԼԻ ՊԱՆ

Իմաստունին մեգը դըղան հասած-չիհասած, դըղին կարկելու էլլավ։

— Ադ ի՞նչ է իդա արածըդ,—ասին նարա,—թո մեմը մեծնա, խելքը կլոխը կա, վերջը կըկարկիս։

— Չէ,—ասաց հարը,— գարելի պան չէ, որ մինչև խելքը կլոխը կալը թողցունում. զերե խելքը հասածովը կարկըվելեն վազ կուկա։

ԽՈՍՏՈՎԱՆՔ

Էրիգը մեռնելու վրա էր։ Գանչից գընգանը ու ասաց.

— Հանա, գըդեսնուա, որ գըմեռնիմ, արի ինձի խոստովանվե, ինձի անհավադարի՞մ էիր խո, խոշտը ասա։

— Խոշտը ասելը ասիմ համա,—բադասխանից գինմաշդը,—մեռնիս նը՝ աղեդ, հաբա չիմեռնիս նը՞։

ԱՍՏՎԱԾ ՀԱՍՆԻ

Ցինգանը ծմեռը ավին դաղը նստած գը-տողար ու գըմըսեր։ Մաղը ավին ձաղեն տուս հանից ու ասաց.

— Աստված հասնի տուսի մաշդոցը։

ԽԱՐԻՐԻՆ ԿԱՆԳԱԳԸ

Խարիրը նստիլ էր, կանգադ դաներ.

— Թեքնեն գա, աղը գա, մաղը գա, ալուր չիկա դեյին գնիգըս հաց չէփի։

ԿՈՂԻՆ ՎԸԳԱՆԵՐԸ

Կողին պըռնիլ էին և տադաստան գանե-յին։ Դեսնող վըգաներնալ հոգ էին։ Պայց կողը գենե զոռ գաներ, որ կողցած չէ։

— Զոռ բեգք է, որ,—դասեր տադավո-ըը,—խոստովանվե, էղավ-կնաց շտե. չէ ասելով պան չի լալ։ Հանա վեց հոքի վըգա-ներ ալ գան, նաքա դեսիլ ին կողցածդ։

— Վեց հոքի՞,—գանչից կողը,— տուք վեց հոքի վըգա ունիք, որ դեսիլ ին իմ կող-ցածըս, կուզի՞ք ձեզի հարուր վեց հոքի վըգա կուդնում, որ չիդեսած լան իմ կողցա-ծըս։

ԱՄԵՆ ՄԵԳԻՍ ՄԵԳ ՎԱՌԵԳ

Մեգ սուր միտքով դըղա, հացի ժամա-նադ, եփոր պերին դաբդած վառեգները, հար-ցուց հորը քի, քանի վառեգ գա ամանին մեչը։

—Ջիս դեսնու՞մ ինչ էրդվագ էղածը, ին-չի՞ է հարցուցածդ ալ,—գասե հարը։

— Ջէ, էրգվադ չէ, ժեքադ է։ Գուզի՞ս հեսաբինք։

— Հաբա։

— Աղեկ։ Հանա նայե, աս-մեգ վառեգ, աս ալ էրգու։ Իսկ մեգ ու էրգու՝ գանե ժեք։

— Խոշտ է ասածդ,—գասե հարը։

— Խոշտ է նը, արի շինը փայ անինք,— դասե դըղան,—Աս մեգը մամայիս, էրգու-սումը՝ ինձի, մնացածն ալ քեզի։

ՄԱՀ ՈՒԴԻՄ, ՉՈՌ ՈՒԴԻՄ

Մարը իրեն երեխաներուն դուվից մեգ-մեգ հավգիթ։ Երեխաները դեսան, որ մարը իրեն հավդիթ չառավ, հարցուցին.

— Մամա, հաբա քեզի ինչի՞ համար հավգիթ չառիր։

Մարը ասաց.

— Հավգիթ դահա չիկա։ Մահ ուդիմ, չոռ ուդիմ ես. ամեն մեգդ իրեն հավգիթին գե-սը գանը, ինձի գոկտի։

Դղաքը ադբես ալ արին։ Իրենք գերան գես-գես հավգիթ, չոռ ու մահ ուդող մարը՝ էրգվադ։

ԿԵՂԱՑԻՆ ԵՎ ԴԵՐԲԱՆ

Կեղացին առչի անքամը խոստովանքի կուկա, քըչոքե զերդերին առչովը։

— Հաբա, բալաս, ասա նայինք, ի՞նչ մեխք արիլ իս,—կասե զերդերը։

Կեղացին գըբաշլայե մանրամասն բադ-մելու իրեն կլոխեն ամեն անցած-չանցածը։

— Ջէ, բալաս, ադոնք ինձի բեղք չին, տուն ինձի բաղմե քուդուդ մեխքերըդ։

— Դերբա, ես ուսում չունիմ, պան չիմ հասկընա. ես քեզի ամեն պան սրայով բադ-միմ, տուն ալ հընդրուե, որն որ քեզի բեգք է նը, ան առ,—գը բադասխանե կեղացին։

ՏԵՐՎԵՐԻՆՆ ԱԼ, ՏԵՐՎԱՐԻՆՆ ԱԼ...

Դեվեյին հարցուցին.

— Տերվեր էլլելը խոլայ է, չենե՞ տերվար ընչընելը։ Դեվեն բադասխանից.

—Տերվերինն ալ հերն անիծած, տերվա-րինն ալ։

ԽՈՌՈՉԸ ԳԱՆՉԻՑ

Սուդասանին մեգը մեգ-ալայ հալխին մեչը ամենևին անհավադալի մեգ բադմու-թյուն գը բադմեր։ Եփ որ վերչացուց, նա հարցուց լսողներեն մեղին.

— Հը, փնչալե՞ս էր, ի՞նչ գը գարծիս աս մասին։

— Ես գը գարծիմ, որ,—ասաց լըսողը,— եփ ադ ամենը ծեր կլոխը էգավ, վերջացավ, ան ժամանագը խոռողը գանչից և տուք ալ... զարթեցաք։

ԹԱԹԱՎ ԿՈՒԿԱՐ

Թաթավ կուկար ու մաշդուն մեգին դու-նին թավանը գը գաթեր։ Գնիգը ասաց.

— Հածո, ել թավանը, գաթածին դաղը աման տիր։

— Ինչի՞ թավանը բիդ էլլիմ,—բադաս-խանից էրիգը,—շինը առեքեն ալ գըբաշլայե գաթելու, ան ժամանագը վարը աման կրտը-նիմ։

ԳԸՆԻԳԸՍ ԱՂ ԳԷԼԼԵ

Խիստ մեծ թաթավ կուկար։ Էրգու մաշդ նստած զրուցք գանեյին։ Մեգը ասաց.

— Աս ինչ էրեվելի թաթավ է էգածը. աս թաթավեն վերջը կեդինին դագը էղած պանը թեմիզ ալ գէլլե։

— Չիլա թե մեռած գնիգըս էլլե,—սարսափած հարցուց մեդալը։

ԽՈՍՏՈՎԱՆՔ

Մեգ գենչ, դնսոք, պայց թեթև վարքով դինմաշդ խոստովանվելու գնաց։ Եփ որ տառցավ դուն, էրիգը խնդալեն հարցուց քի, ի՞նչ մեղք խոստովանելու կնացիլ էր։

— Հեչ,—ասաց գինմաշդը,—բոշ պաներ։ Դերդերը առչինը հարցուց՝ հավատարիմ իմ ես քեզի չենե չէ. ես ալ, իհարգե, «հա» ասի, վերչն ալ խոստովանեցա, որ սուդ ասելու մեչ մեխք կործեցի, նա յալ ինձի թողութին դուվից։

ՕՇՏԱԽԸՍ ԳԸ ՀԱՎԱԴԱ

Էրգու օշտախ գէշթային։ Մեգը հարցուց մեդալին.

— Տուն գրհավադա՞ս, որ Քրիստոսը ժեք հացով, ժեք ձուգով ժեք հազար մաշդ գերազրիլ է։

— Գերադրածին գրհավադամ, քշտացածներուն ալ՝ օշտախս գրհավադա,—բադասխանից մեդալը։

ՍՈՒՐ ԴԸՂԱՆ

Դերդերը գրոնի քննության ժամանագ գրհարցունե աշազերդին.

— Նոյը ուներ ժեք դըղա—Սեմ, Քամ, Հաբեթ, վո՞վ էր նացա հարը։

Դըղան չի դըրցավ բադասխան դալ։ Էգավ դուն, պանը բադմից հորը։

—Ինչ անխելք դըղա իս ադ էղիլ է, հածե,—ասաց հարը,—հաբա մեմը աղեգ միդք արա։ Մեր տիրացին չաղչըբանը ժեք դըղա ունի—Օվանես, Խաչուգ, Սիմոն. վո՞վ է նացա հարը։

— Հարդե չաղչըբանը։

— Էղավ գնաց։ Շինը հասկըցա՞ր։

Դըղան նորեն կընաց քննությունի։ Հասկըցան պանին էղենը և նորեն հարցուցին քի, վո՞վ էր Նոյին դըղոցը հարը։

— Մեր տիրացին չաղչըբանը,—բադասխանից դըղան համարցագ։

ՋԻԳԱՐ-ՄԻԳԱՐ

Մեգ մաշդ ջիգար կընիլ էր ու դուն գեշթար։ Ժամին քովին անցած ժամանագը լսից ժամեն երգածները ու ասաց միդքեն.

«Գիրագի օր է, ժամ մուդնում, մեգ քանի ծունգ աղոթք անիմ ու էշթամ գուն»։

Մըդավ, ժամին հայաթը ջիգարը դախից ու ինքը նես անցավ աղոթք անելու։ Նա յալ ծունգ չոքիլ էր ու գուզեր աղոթք անել, դերդերը սեղանեն պածռ ձանով գանչից.

— Առեք, գերեք...

Մաշդը թամիլ արավ, որ իրեն ջիգարը բիդառնուն ուդին, խևի բես դնղեն էլլավ. «Վայ, ջիգարըս բիդ ուդին» կանչելով. աղոթք չարած տուս վազից ժամեն, առավ բադեն գախած ջիգարը և փախավ դուն։

ԵՓՈՐ ՍԻՐՏԸԴ ՈՒԶԵՆԱ

Մեգը իրեն պարեդամեն փոխ ստագ առավ ու բայման տըրից, որ եփոր սիրդը ուզենա, ան ժամանագն ալ բարտքը դա։ Ամեն անգամ, որ պարեգամը ստագը գուզենար, նա բադասխան ղուդար, թե գահա սիրդը բարտքը դալ չուզե։ Պարեգամին սիրդը էլլավ ու կործը օրենքի դուվից։ Բարտքին գերը տադավորին ալ համարցագ գերբով հայդնից, որ իրենց բայմանով եփոր սիրդը ուզենա, ան ժամանագն ա բարտքը բիդ դա։

— Շադ աղեգ,—ասաց տադավորը,— ես շինը գը հրամայիմ, որ քեզ պանդ նստեցունուն, տուն ալ եփոր սիրդըդ ուզենա, ան ժամանագն ալ բարտքդ գուդաս։

ՓԵՇՔԻՐՆԵՐԸ ՄԻՇՏ ԹԱՑ ԳԸԼԱ

Մեգ նոր հարս հարսնիքեն քանի ժամանագ էդև գնաց իրեն հորը գունը։ Մարը հարցուց.

— Ինչպե՞ս է, բիանայիդ դունը հանկչեցա՞ր, ըռինդ է։ Աղչիկը ասաց.

— Ամեն պանն ալ ըռինդ է, համա մեդ պան սիրդովո չէ. փեշքիրները (երեսսրբիչները) սալթը թաց գըլա։

— Ադ անոր համար է, որ տուն ամենեն վերչը գելլիս դեղեդ ու նաքա սըրփըվելներեն վերչը դըլվացվիս, գըսըրփըվիս։ Զոր փեշքիրներով սըրփըվելու համար դեղեդ գանոխ բիդ էլլիս,—ասաց մարը։

ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ՄԻՆՔ

Մեդ ղենգին հոքեվորագան կառետով գանցներ ճամփով։ Տիմացեն արաբան պառ-ձած, մեդ գենճ, բոյով ու կեր կեղացի կուկար։ Հոքեվորագանին գառաբանը գը գանչեր, գր գանչվրոդեր, որ կեղացին մեգաի քաշվի, ճամփա դա, պայց կեղացիի հոքսն ալ չէր։ Հոքեվորադանը, լսելով իրեն գառաբանին պածռ-պածռ հայհոյածը, կլոխը հանից կառետեն և ասաց կեղացիյին.

— Պարեգամ—ինչպես վրադ գը նայիմ՝ ավելի քուգուդ մարմինիդ վրա հոք դանող էղիլ է, քան հոքիյիդ։

— Աստեղը ի՞նչ արմըննալու պան դա որ,—ասաց կեղացին,—ախր մեր մարմինին վրան հոքս քաշողը մինք ինքներս ինք, համա, մեր հոքիյին դերադուրը ծեղիմեն քըստանանք։

ՋԱՄՓԱԴ ՓՈԽԵ

Մեդ մաշդ Սուրբ Գարաբեդ ուխտ գէշթար։ Կընաց-կընաց ու իրիդունը հասավ մեդ կեղի։ Մոդգրցավ մեդ դունի ու խնթրից, որ միսաֆիր առնուն։ Դունին դերը մեծ սիրով ընդունից և գընգանը ասաց, որ միսաֆիրին գերադրե։

Գընիգը կնաց, փուռեն հանից մեքադ դարգած օչխար ու տրից միսաֆիրին առչուվը։ Միսաֆիրը էրեսը խաչ հանից, բաշլայից ուգելու և սաղ օչխարը անուշ արավ։ Դանուդերը դեսավ, զարմացավ ու հարցուց.

— Պարեգամ, Սուրբ Գարաբեդ ի՞նչ ուխտ արիլ իս։

— Շտահրս փեռադ է, շտահ խնթրելու գեշթամ։—բաղասխան դուվից միսաֆիրը։

Առավոդ, եփոր միսաֆիրը յոնոմիշ էղավ էշթալու, դանգերը ասաց.

— Ուխտրդ ընթունագան լա, պարեգամ։ Համա ուխտրդ դադարելեդ ետքը աս ճամփով մի կալ։

ԱԳՌԱՆ ՔԸՍԸՐԵ

Կեղեն նոր էգած մեգ պանվորի խրգեցին, որ էշթա։ ֆելան բարոնին ճաշի ձան դա։ Պանվորը կընաց ու բադահեցավ ան միչոցին, որ բարոնը շչոտկայով ագռաները քըթեմուացուներ։ Ասելիքը ասաց ու դուն կալով աղային խաբեր պերից.

Բարոնը ճաշի րիդ կա, աղա. աշտխ ինքն ալ բադրաստություն գը դեսներ—ագռան քըսրեր։

ՀԱՇՏՈՒԹԻՆ

Մեդ խիստ խման մաշդ հիվանդ բառդիլ էր։ Նա գյանքին շուր խմած չէր։ Մեռնելեն քիչ մը առաջ ծառավցավ, ջուր ուղաց խմելու։

— Գուղիմ մեռնելես առաջ անհաշտ դուշմանիս հետ հաշտվել,—ասաց Նա։

ՕԴԱՐԻՆ ԼԱՅԸ

Մեդ հադ մեռել գըդանելյին թաղելու։ Մեռելին էտեվեն շադ մաշդ գեշթար ու շադերը գուլային։ Կնացողներուն ավելցավ (միացավ) մեդ օդար մաշդ ու բաշլայից ամուր ձանով լալ։ Գոզեն կընացողը հարցուց.

— Մեռելը քեղի սո՞յ է։

—Չէ, սոյ չէ,—ասաց օդարագանը։

— Ինչի՞ ադրես խաթի ձանով գուլաս հաբա,—հարցուց յանաշայեն կնացողը։

— Ասքան մաշդը մեգ-մեգ հադ դանելով ե՞փ բիդ վերջանա։ Շտե ադոր համար դուլամ ես,—ասաց օդարագանը։

ԷՐԳՈՒՍՆ ԱԼ ՎԱՍՏԸԳԵՑԱՆ

Մաշդուն մեգը, որ քըսիրեր մաշդումե փոխ ստագ ուզանալ, պայց բարտքը չիդալ, մեգ անքամ ստագ ուղաց մեգ հարուստ ու պարի սիրդ ունեցող մաշդումե։ Հարուստը կիդեր, որ դուվածը գորած էր, պայց չիդալ չէր գըբնար, զերե սիրդը չէր ներեր և խիղճը գը դանչեր չիդար նե։ Ան ժամանակ նա մաշդուն դուվից նարա ուզացածին գեսը։

— Առ ասքան,— ասաց նա,—ասբեսով հեմ ես օքուտ գունենամ, հեմ տուն. ես կըդած գըլամ գեսը, տուն ալ շահած գըլաս գեսը։

ՆՈՐ ԱՂՈԹՔ

Դերդերին մեգը ձեռքը էրգընցուց գերագուրին, թահմին չանելով, որ խիստ գաք էր, գերագուրը դարավ պերանը, պերանը էրից և խիստ կեշ քիֆիր հանից պերանեն։ Սեղանագիցներեն մեգը հանից ծոցեն դեդրագը ու մադիդը և սկսից կրել։

— Իգա, ի՞նչ կըկրիս, ծո,—հարցուց դերդերը։

— Կրի դառնում, որ չի մոռնամ՝ նորվան արած աղոթքըդ պերան էրածի վրա,—բադասխանից մաշդը։

ԿԱՌԱՎԻԹԻՆ ԱՉՔԵՐԸ

Աստված Թոփ արիլ էլ իրեն ստեղծած հայվաններուն, թռչուններուն, սողուններուն ու մեղալ մանդրռ ու մեծ արարածներուն և աչքեր փայ դաներ։ Ամենին դուվից ու նայեցավ՝ մեգ ջութ աչք մնացիլ է, ստանալու հայվան ա չիկա։ Մեմալ նայեցավ կառավիթը հեռացիլ էր, կէշթար։ Էրգան սարրռ անելեն Նտրը, երփ աստված իրեն դեսած ու աչքեր դուված չէր, նեղացիլ էր։

Աստված կառավիթին էտեվեն դանչից, որ եղ տառնա ու իրեն բադգանելիք աչքերը առնու։ Կառավիթը սիրդը ցված, որ աստված ժամանագին իրեն դեսած ու աչքեր դուված չէ, նեղացած դանչից.

—Ադ վերչիվան գալու աչքերրդ շինը էդեվիս տիր.—ասաց ու ինքը հեռացավ։

Աստված ալ գեսավ, որ կառավիթը եդ տառնալու չէ, առավ աչքերը ու քաշից նարտ էդեվեն։ Աչքերը խոշտ որ գըրան կառավիթին էդեվին։ Ադրես ալ կառավիթը մնաց էդեվեն աչքերով։

Գ Ը Ռ Ե Վ

Ճաշի ժամանագ էրգու հոքի խիստ գրռե արին. հանա-հանա յախա-բողոզի բիդկային, պայց մեգըս մեդումե հեռու նստած էին։

— Էգեր ձեռքըս հասներնէ, ինչ շամառ զարդած բիդ լայի էրեսիդ,—ասաց մեգը,— անրես հեսաբ արա, որ շամառը դեբիլ իս։

— Հաբա ես քովըդ նըստած լայի նը՞. համան խամաս փորրդ դոխած գըլայի ու դեղն ու դեվը լեշըդ կեղին փըռած։ Տուն ալ անբես հեսաբ արա, որ մեռած իս,—բադասխանից մեղալը։

Ո՞Վ Է ՄԵԳԱԼԸ

Մաշդուն մեգը քըխոսեր մեգ գինմաշդու հեղ ու դասեր, որ իրեն գյանքին մեչը ճեմը էրդվադ շենքով-շնորքով գինմաշդու բադահիլ է։

— Ո՞վ է մեդալը,— հարցուց լսող գինմաշդը։

ՔԵՉԻ Ի՞ՆՉ

Մաշդուն մեգը դրխուր-դրրդում, կլոխը դախ գեշթար սոխախով. բելնի էր, որ մեգ մեծ հոքա ուներ։

— Հը՞, ի՞նչ է գենե կլոխըդ գախիլ իս,— ասաց պարեգամը տիմացը էլլելով։

— Մեծ բարտք ունիմ, բարտքիս ժամանագը էգիլ է, պայց ստագ չունիմ, որ դամ։

— Էյ, վերչը՞. քեղի ի՞նչ, տուն ինչի հոքս գանիս։ Թող հոքս անե նա, որ քեղի բարտք ստագ դուվիլ է,—ասաց պարեգամը։

ԺԵՔ ՄԱԽԱՐԻՉ

Մաշդուն մեգը անքան խման էղիլ է, անքան խման, որ աշտխ նարա դըղաքը էճիղ էղիլին իրենց հորը վրան հալխին արած պամբասանքներեն։

Մեգ անքամ ալ մոնոպոլիյին քովեն անցած ժամանագները գըդեսնուն, որ իրենց հարը դայնած քըխմե։

— Գոկտի, բաբա, խմածդդ,—դասին,— աշտխ մըհալան էլլելու էրեսներուս չէշթա՝ ամենը քու խմածիդ գալաճին գանին։

—Հա՞, դըղաքըս,— գարմըննա հարերը,— հանա մեմալ չի խմելուլիս մախառիչը զր խըմիմ,—գասե։

Գանցնի գըդոր ժամանագ, հարերը խըմած դուն կուկա և դղաքը չինեղանան դեյին ինքը առչև գառնու.

—Հանա, դըղաքըս,—գասե,—մեմալ չիխմելուլիս մախառիչը խմիլ էի, վաղ էգաձիս մախառիչն ալ խմեցի. մեմալ խըմածըս դեսնուք նը, վիղըս գըդռեցեք։

Դըղաքը պան չին ասիլ, համա մեգ քանի օր էդև գենեն հորերուն խըմաձին ռաստ կուկան նը, հարցը աշտըխ գուդռուգ կըտընին տիմացը.

—Բաբա, մեծի մրգիդ չանելու լաս նէ, մեմա մի կալ, գունը մի մուդնուլ,—դասին,— քու խըմածիդ համար հալխին առչևր մինք սեվէրես գըլանք։

— Էյ, դըղաքըս, հալխին խելքը չի հասնի դեյին, տուք ալ գարճ խելք իք ինչ։ Մեմր ըռինդ միդք արեք. չիխմելուլիս մախառիչը խմեցի, վաղ էգաձիս մախառիչը խմեցի, սա մեմալ չի բաշլայելուլիս մախառիչը բիդ խմեյի՞ չենե՞ չէ,—գըբադասխանե հարերը։

ԻՄ ԼԱՑԱԾԻՍ ՄԻ ՆԱՅԻՔ

Հարը, մարը հարսնիքի թեդերիք գըլային։ Ախչիգը նստած բըլդրը-բըլդրը աչքերեն քըթափեցուներ։ Հարը նայեցավ ախչիգանը վըրան, մեխկըցավ.

— Ախչիգը դուլա, չուղե հարս լալ,—ասաց նա գընգանը,—զոռերըս ի՞նչ է։ Արի, սյա հարսնիքեն վաղ կանք։

Ախչիգը գամացով կըլոխը վերուց և ասաց.

— Տուք իմ լացածին մի նայիք, ձեր անելուն արեք։